

## ԱՌԱՋԻՆ ԴԱՐԱԴԱՐՁ

ԿԱՄ

ՀԱՐԻԿԻՐԱՄԵԱԿ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐԱԾԱՆ



ՈՌԻՖ ԽՆՉ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԵՑ ՄԻ ԵՒ ԵՍ ԶԲՈՎԱՇԱՌԱԿ ՏԻԵԶԵՐՄ  
ՇԱՄՔԵՄ, — ՅԱՅՄՆԻ Է ամենուն համբաւաւոր իմսսոտա-  
սիրին այս վճռոս. և սակայն ով կարող է գտնել՝ ի-  
տիեզերական կազմածիս՝ այդ խնդրեալ կէտն։ Քրիս-  
տոնէական իմաստոփրութիւն՝ զին առաջին և անսկիզբն՝ կը քարո-  
զէ իւր հետևողաց լինել այդ կէտն։ յայսնի ցուցընելով որ պէտք է  
գերբնական կարգի մէջ զայն խնդրենք, Մէնք քան զվերոյիշեալ ի-  
մաստուն երկրաշափն համեստագոյն բազմանք կարենամք դուշել գու-  
ցէ. « Ճուէք մեզ անձ մը և մենք յեղափոխենք զաշխարհս » ։ իւ սա-  
կայն՝ ի զուր կը խնդրեմք այդ անձն, այդ մի միակ էակն, որ երբեք պի-  
տի չկարենայ մեր փափաքածն՝ ի զըրէս հանել։ Եթէ պատմութեանց  
մէջ կը տեսնենք երբեք երբեք այդպիսի անձնաւորութիւններ որք յե-  
զափոխած կ'երևին կարծես բովանդակի իրենց զարուն մէջ ապրած ազ-  
գերը, գա յառաջ կու գայ ոչ եթէ նոյն անձին սեփական զօրութենէն,  
այլ նոյն գարուն մէջ տիրապետող և նախնարար պատրաստուած  
հասարակաց ոգեկան մղումէն, որոյ շարժի կամ դրզոիչ կը լինի այն  
կարծեցեալ զիւցազնն կամ համեստագոյն և պատշաճագոյն անուամբ  
կոչելով՝ գործին. որ և ինքն իսկ յակամայս նոյն հասարակաց ոգւոյն  
մղման ներքեւ կը գործէ. Այսպիսի անձինք կրցան նշանաւոր գոր-  
ծեր կատարել՝ որովհետեւ իրենց առձեռնպատրաստ գտան վերոյի-  
շեալ իմաստասիրին խնդրեալ կէտն՝ այսինքն իրենց ժամանակին մէջ  
ընդհանուր տիրապետող հասարակաց ոգւոյն հզօր ազդեցութիւնն։  
իսկ երբ այդ հասարակաց ամբող ոգին՝ դեռ՝ ի պատրաստի չէ, գեռ-  
հասունացած չէ, այն ատեն անհնար է անձի մը, որչափ և իմաստուն  
և քաղաքագէտինին, գործոյն յաջող ելք ունենալն։ Ռւստի հարկ է նախ  
երկիրը պատրաստել կարեոր հիւժերով որպէս զի տնկագործու-  
թիւնն յաջողի։ իւ որովհետեւ մարդուս կեանքն կարծօրեայ է, և գա-  
ղափարական յեղափողութիւն մը՝ գարաւոր ճգանց կարօտ, երբեք  
անձնաւորութեան մը գործն չէ կարօղ արգիւնք յառաջ բերել, ե-  
թէ այդ անձնաւորութիւնն իւր գործունէութիւնն տեւողական և յա-  
ւերժական շընէ իւր նմանեաց ձեռքով անդր քան զսահմանս իւր  
շափով և կշռով որոշեալ աւուրց։

Այս. մըշափ քաղցրութեամբ և միխթարութեամբ լի է մարդուս, յետ հասնելու ՚ի ծայր իւր մարդ մահկանացու ուղղոյն, դառնալ ակնարկ մը ձգել իւր անցեալ ամաց մէջ գործած ամենայն բարեաց վրայ առ ընտանիս, առ քաղաքացիս և առ հայրենիս իւր, սրոց առ ինքն ցցց տուած գոհութեանց և երախտագէտ զգացմանց միխթարութեան մէջ կնքել իւր թանկագին օրերն, անմահութեան յիշատակ թողրվ ապագայ սերնդոց սրաին և մտաց մէջ, բայց այս վերջնոցս համար որչափ ընդհակառակն ցաւոց և տիրութեան առիթ է՝ այդ օրինակ բարեգործ կենաց մը իսպառ շրջանին, բայտ անհրաժեշտ օրինաց բը-նութեան: Բայց ոչ այսպէս մարդկային հաստատութեան կամ ընկե-րութեան մը գործն, որոյ կեդրոնական շարժիչ լինի բարյական զօ-րութիւն մը, որ իւր ազգեցութիւնը ներգործէ յարատե յընթացս ժամանակաց ընկերութեան անհատներու սրաին մէջ: Վասն զի կը մեռնի արդարեն, կը վերջանայ առանձնական մը, որչափ և նշանաւոր գործիչ եղած լինի, բայց չի մեռնիր չի լմնար ընկերութիւն մը, եթէ չսպառի այն ներքին կենսական զօրութիւնն, որով իւր ան-ցեալն և ներկայն իւր ապագային հետ զոդեալ են: Ժամանակին թաւալմամբ, կ'անցնին և նորա համար ժամանակի և ամք, այլ նա'ի գարա-գլուխ հասած տարիքին՝ գեռ ևս յերիտասարդական աշխուժի և գոր-ծունչութեան մէջ կը գտնուի. որով երբեք չի թողար իւր գագաղին յուղարկաւոր ժառանգներ արտասուտից հեկեկանք, այլ կը յա-րուցանէ միշտ իւր յաղթական կառքն յառաջ վարող եռանցնավառ պաշտօնեաներ: — Ամիսոփելով խօսքերնիս ՚ի մասնաւորի, այս ընդհանուր խորհրդածութիւնք արթելցան մեր մտաց մէջ՝ յիշատակաւ այս տարւոյց մէջ տօնուած հարիւրամեայ յորեւեան շրջանի Միխթա-րեան Տպագրատանս:

Միխթարը . . . և որպան փառահեղ գործոց և արդեանց հետ նո-րա անունն կապուած չէ: Զինեալ կրկնակի թեւօք՝ սրբութեան և ի-մաստութեան՝ այս գերապանչ անխոնջ հոգին, լաւ բմբանեց իւր ժամանակին թէ ինչ միջոցներ կարեւոր է զազգն յառաջադիմութեան ճամբուն մէջ զնելու, և թէ ինչ եղանակաւ այն միջոցներն ՚ի գործ պիտի գրուէին. ուստի սկսաւ գործել առանց լքանելու ՚ի ձախո-ղութեանց: Այս պատճառաւ հարկ եղաւ իրեն ցվերջին շունչ կենաց՝ անգագար պատերազմիլ ընդդէմ մարդկային կրից և հակառակու-թեանց, որք անսուրբ ոգւստ իւր գործը խախտել և կործանել կը ջա-նային անդէն առ հիման, ոմանք շարժեալք ՚ի նախանձու կրից՝ և այլք ՚ի տպիտութենէ, ոմանք ՚ի թերեհաւատութենէ և այլք՝ եթէ նե-րելի է ըսել՝ յառաւելագոյն հաւատոց, և կամ բացոյսոյս ևս՝ ՚ի մոլ-եռանդութենէ: Ուստի հարկ էր Միխթարայ զառաջինսն յաղթա-հարել, և երկրորդաց ուսուցանել և ուղիղ ճամբան առաջնորդել Տպագրութեան գիւտը զօրաւոր զէնք մը տեսաւ Միխթար իւր նպա-

տակին համնելու, մանաւանդ որ հեռի իւր հայրենիքէն մնացած՝ դա-  
ուըն պարագայիւք ժամանակին, դառնագոյն ևս ցաւ կը զգայր՝ երբ  
իւր աշակերտներն իրեն նման հալածանօք և չսրչարանօք՝ հարկ կը  
տեսնէին դառնալ հեռանալ վերսոին յօտարութիւն, առանց կարող  
լինելու ըստ պահանջմանց ժամանակին՝ մերձաւորապէս նպաստել  
իրենց սիրելի ազգակցաց: Ուստի այնուհետեւ փոխանակ բազմաթիւ  
աշակերտաց կենդանի ձայնին՝ սկսաւ ուղարկել՝ ի հայրենիս՝ անձայն՝  
այլ մնայուն, այլ գործունեայ քարոզինելոր իւր սրբարար և ազգօգուտ  
սկզբանց: — զգիրս, որք և առաւելագոյն յաջող ելք ունեցան, քան  
զոր գուցէ նուազ յուսացեր էր՝ ի սկզբան և նոյն ինքն Մխիթար,  
վասն զի ոչ միայն իւր վարդապետութիւնքն ընդունելի և սիրելի ե-  
ղան ժողովրդեան, այլ նոցա պատճառաւ և ինքն Մխիթար իւր աշա-  
կերտօք հանդերձ՝ անձկալի, պատկառելի և փարելի, նա՝ որ սուլ-  
ինչ յառաջ նախանձու և զրպարտութեանց սլաքներով հալածուած,  
կտմաւոր և միանդամայն ակամայ աքսորանաց մէջ միայնացած՝ աս-  
տուածային օգնութեան փրկագործ ժամուն կը սպասէր:

Այս զէնքն և այս նպատակն՝ նոյն զիտաւորութեամբ և նոյնպէ-  
սի միջոցներով, ՚ի գործ վարեցին և կը վարեն, ըստ անխոտոր շաւզի  
երանաշնորհ հիմնադրին, նաև ՚ի ներկայիս՝ Մխիթարայ հոգւոյն և  
սրտին լաւութեանց և մտացն ուղղութեան ժառանգ եղող աշակերտօք:  
Այս համառօս և կարեւոր խորհրդագութենէս վերջը, շինելով՝ յօ-  
դուածիս նպատակ՝ ոչ ներբող յօրինել Մխիթարայ կամ Մխիթարեան  
սկզբանց, և ոչ նոցա գործունեկութիւնն զրուատել կ'անցնինք ուղղա-  
կի մեր նիւթոյն փրայ խօսելու, որ է Մխիթարեան Տպարանի դարու-  
մը միջոց ունեցած կրօնական, ուսումնական և քաղաքական գոր-  
ծունեկութիւնն յազդիս, համառօսի ՚ի վերջոյ պատմական տեղեկու-  
թիւն մը տալով նորա հաստատութեան և անցելոյն մասին:

## Ա.

Տպագրութեան գիւտն՝ աւաղելի ստուգութեամբ քաջայայտ իսկ է  
ամենուն՝ որ որչափ օգտակար՝ այնշափ ալ գործես վնասակար եղած  
է մարդկային ազգի: Նոյն զէնքն ՚է զոր ողջամիտ գատողութիւնն և  
նորա հակառակ՝ հիւանդացած ուղեղն հաւասարապէս ՚ի գործ կը  
վարեն. Նշմարտութիւն և ստութիւն, իրականութիւն և պատրանք,  
լցոս և խաւար, եթէ ներելի է այսպէս ըսել, մի և նոյն գործարանին  
մէջ կը ձուլուին. կամ այլակերպ խօսելով, նոյն ծառն ՚է որ տայ  
զգտուղ բարի և շար միանդամայն, նոյն աղբիւրն ՚է որ բղնէ զքաղ-  
զըր և զգառն. խտիրն՝ որ զայս երկու գիմամարտ զաղափարները կը  
զանազանէ յիրերաց՝ է մի միայն զիտաւորութիւն գործողաց: Վայ  
աշխարհի, ազգի, կրօնից, գիտութեանց, արուեստից, և ամենայն

ընկերական և ընտանեկան բարեմտանութեանց, եթէ ուղղասէր գործողք յարուեստի տպագրութեան՝ ծուլանան առ վայր մի իրենց օլրբանուէր պաշտաման մէջ՝ Ներկոյ դարուս անձանց ազատամիտ անսանձ կրօնական զգացմանքն հանդերձ մ'է, զոր բազումք ստէպ ստէպ կը փոփոխեն, կը կարկատեն, կը պատառեն, և հուսկ ուրեմն՝ յետ ընդ վայր նորոգութեանց և մաշմանց՝ կը նետեն արհամարհանօք իբրև հնութեան զազրալի մնացորդ մը՝ անխտրութեան ազդիւսին մէջ, գոչելով քրքշանօք՝ Ազտառութիւն, անկեղծութիւն, լուսաւորութիւն... պիտակ անու անք, որք մնացի ունկնդրաց, գուցէ և նոյն իսկ հնչողաց լսելեաց մէջ՝ ընդհանրապէս յօդաւոր, այլ անիմաստ ձայնք են, բայց աւազ որ թեթեասէր և ծանծաղամիտ պատանեկութեան սրտին խորհրդաւոր և երկիրդած բարեպաշտութեան զգացմունքը խանգարելով, անփորձութեան խարկանօք՝ ապականութեան բարյից տղմոյն մէջ զիրենք կը թաղեն :

Միխիթարայ նման կրօնասէր և ազգասէր անձի մը առաջին պարտքըն և ջանքն պիտի լինէր ուրեմն՝ այսպիսի ապականարար սկզբանց դէմ զինել զարուեստ տպագրութեան, իբրև սկզբնական և կարեռագոյն նպատակ՝ յօդուա հոգեկան և բարյական կենաց ազգին, քաջ գիտելով՝ որ լաւ բարյականի հետ անհրաժեշտ կապակցութիւն ունի և լաւ գիտութիւնն : Այս գիտաւորութիւնն ակն յայտնի կը աեսնուի անդէն՝ ի սկզբան հաստատութեան Միխիթարեան Միաբանութեան, երբ զես ևս չունելով իւր սեփական տպագրատուն, օտարաց տպարաններու մէջ կը ջանայր հետզհետէ հրատարակել, յօդուտ ընթերցասիրաց հետևեալ կրօնական գրուածներն .

Ի Կ. Պօլիս . — Թովմայի Գեմբացոյ Ասէեմատեանն համ Զորս գերք Նմանուղու (1700 - 15) թեան Քրիստոնի . — Հրահանգ մուտարական ազօթից . — Մէկութիւն Յայտնութեան Ս. Յոհաննեսու . — Մէկութիւն Երգոց Երգոյն Սողովմոնի, և այլն :

Ի Վենետիկ . — Մէծին Այլերոի Աստուծաբանութիւն . — Քրիստոնէական վարդապէտութիւն . — Կրթութիւն ազօթից . — Խոկումն քրիստոնէական . — Նոր կատարան . — Գիրք Մոլութեանց և Աւագինութեանց :

(1720—31) Հոգևորական պատերազմ . — Խօժան զզման . — Քրիստոնէականք գրաբարք և աշխարհաբար . — Դրախտ հոգւոյ . — Յարացոյց շշմորիստ ապաշխարովի . — Գիրք յազագ հանդերձեալ կենաց :

(1732—42) Աստուծածուն մատեան . — Սազմուք Գաւթի . — Բովածակութիւն Աստուծածաբանութեան . — Մէկութիւն Ժողովովին . — Մէկութիւն Մատթէի . — Պարագ հոգւոր . — Զայն Քրիստոնի . — Բուրատուն ազօթից . — Ժամագիրք . — Ճառք յաղագս համականութեան ընդ Աստուծյա , և այլի :

(1743—50) Սկըռունք քրիստոնէական կենաց . — Աւզեծուծ Աստուծաբանութեան . — Աստուծասէր հոգի . — Ճմարատութիւն յափառնական կենաց . — Մարկենաց . — Արք Ս. Լուսաւորչին, և այլն :

**ԱՀԱՅԱՍԻԿ** բովանդակ կէս դարու միջոց 'ի գործ դրուած Միխիթա-  
րեան տպագրութեանց ցուցակն, 'ի բաց առեալ երկու քերականու-  
թիւնք հայ լեզուի գրաբարի և աշխարհաբարի (Միւ. Աբբահօր) և  
երկհատոր բառագիրք Գրաբար — Աշխարհաբար և Աշխարհաբար —  
Գրաբար ( Հ. Մկրտիչ Անանեանի ). — Այս մի քանի ուսումնական աշ-  
խատութեամբք Միխիթար Արքահայրն իւր հաստատած ընկերութեան  
կարծես նշանաբանն դրաւ, յետ հոգեշահ գրոց աւանդելով նոցա-  
իրենց մոյրենի լեզուին և հին և նոր գրականութեան զարգացում :

Հստ ամենայնի նշյն ուղղութիւնն և նպատակն ունին նաև երկրորդ,  
երրորդ և չորրորդ կամ ներկայ կիսագարեան ժամանակաց շրջաննե-  
րու մէջ եղած հրատարակութիւնք, յօրս թէպէտ և համեմատելով  
ընդ առաջնոյն՝ սակաւածիւ են կրօնականքն քան զուսումնականս,  
այլ են միանգամայն և պատկառելի հմտութեամբ լի գրուածներ,  
ծնունդք բեղմնաւոր մտաց Զամբեաններու, Աւետիքեաններու, Աւգե-  
րեանց, ինձիճեանց, Հիւրմիւղեանց և նմաննեաց, որք զոյգ ընդ իմաս-  
տափրական - աստուածաբանուկան - պատմուկան գիտութեանց՝ շը-  
դանդաղեցան գրինին շարժելու նաև 'ի հոգեոր օգուտ ազգայնոց : —  
Այս զրուածոց մէջ մոտադիր քննողն պէտք է զանազանէ յատկապէս  
հոգեւոր կամ հայեցողական կենաց վերաբերեալներն 'ի բարոյական-  
եկեղեցական - աստուածաբանական գրուածոց, որք հետզհետէ կ'ա-  
ռաւելուն թուով և ընդարձակութեամբ նիւթոց քան զառայինան,  
պարոնակելով յինքեանս խորին գիտութիւն բարոյական և աստուա-  
ծաբանական ուսմանց, հանդերձ ճոխ հմտութեամբ եկեղեցական,  
իրաւագիտական և իմաստափրական ճիւղերու : — Շատ կ'երկարէր  
յօդուածս եթէ աստ մի առ մի յիշէնիք և համառօտիւ անգամ խօ-  
սէինք այս իւրաքանչիւր հրատարակութեանց ներքին և արտաքին  
արժէից վրայ, ուստի կը բաւականանանք 'ի մէջ բերելով ըստ ժա-  
մանակագրական կարգի հրատարակութեան՝ անոնց անուանքը միայն,  
գիտելով մանաւանդ թէ առ հմտագյուն ոչ սակաւ ընթերցողս մեր  
Հանգիսին՝ նաև մերձաւորապէս և ամենօրեայ կիրառութեամբ ծա-  
նօթ են այս հրատարակութիւնք, ըստ հետեւալ համառօտ ցուցակիս :

### Հոգեւորականք - Բարոյականք - Քարոզիրք

(1750-1800). — Կիւր ժամանակի . — Գիւրք հրաշից Սուրբ Կուսին . — Քարոզ-  
քիւրք եւ Ծիկարգեան . — Հիւսեակ բարեբանութեան Ա. Կուսին . —  
Մատածութիւնք 'ի չարչարանս Քրիստոսի . — Խորհուրդ աստուած-  
պաշտութեան . — Պատէքը առնչյ Ա. Աստուածածնի . — Խոկմունք  
քրիստոնէականք . — Պատէ Քրիստոսի . — Խրատք կատարելու-  
թեան . — Կրթութիւն ասպաշխարովք . — Գիւրք բացեալ . — Ակն  
հոգեյ . — Կիրակուրք քահանայից . — Պաշտօն Ա. Կուսին :

(1800-1850). — Կանոն կենաց քրիստոնէի . — Գիւրք կենաց . — Տարեկան ա-

ռածք . — Բարի Խորհուրդներ . — Մատածութիւնք աէրունական տօնից . — Մատածութիւնք 'ի վերայ ցաւոց Ա . Կուսին . — Յայտ . նութիւն աստուածգիտութեան . — Գանձարան չնորհաց Ա . Կուսին . — Ա . Գրիգորի մեծի հոգուական . — Կրթութիւն իսուսովանահարց . — Խմասութիւն մարդկային . — Քարոզգիրք նոր ընդարձակ . — Ճառք և ներբողեանք զանազանք . — Սուրբ ըլլալու մատածութիւնք . — Կուտադարան օրհնութեանց . — Անզան ինկոց . — Ճշմարիտ գարձ . — Առաջնորդ երկնից . — Արէւստ աստուածոիրութեան . — Զատագովութիւն հաւատոյ . — Մեկնութիւն հայր Մարի . — Կրթութիւն (նոր) ապաշխարոզաց . — Այցելութիւն հիւանդաց . — Տնտեսութիւն մարդկային կենաց . — Հանգանակ հաւատոյ . — Յազգագույն պարտուց քրիստոնէի . — Ազգասեր :

(1850-1889). — Ոսկեգիրք կամ Հրահանդ խոնարհութեան . — Խոսք առ քահանյայս . — Բնմասացութիւնք 'ի Տիրամայրն . — Ճառք 'ի գովեստ Ա . Կուսին . — Իմասց 'ի չարչարան Քրիստոսի . — Ճառ յաղագս բարեխօսութեան սրբոց . — Խորհրդական Խոսափանութիւն . — Պատրաստութիւն մահուան . — Կրթութիւն սիրելոյ զՑիսու . — Կանոն կենաց քրիստոնէի . — Մատածութիւնք 'ի չարչարան Քրիստոսի . — Հրահանդք կրթութեան յաւիտենական կենաց . — Խմաստասիրութիւն հանդանակին հաւատոյ . — Յազգագույն երկից ուխտից կրօնաւորութեան . — Զքոսարան տօնից . — Փոքրիկ քառասնորդք . — Պատրոց բարոց . — Առանձնութիւն հոգևոր . — Աստուածասէր . — Վարք Յիսուսի . — Ամսօրեայ մտածութիւնք քահանայից . — Հովիւ հոգևոր . — Հովու սիրոյն Քրիստոսի . — Առաքինի և քաղաքակիրթ պատանի . — Առանձնախօսութիւնք Ա . Օգոստինոսի . — Պատմութիւն վարուց Կուսամօրն . — Անունդ հոգևոյ , և այլն :

### Աստուածարանականք — Մրրագան մեկնորիշնք

(1750-1800). — Ա . Լեռնի Մեծի Տոմար . հայ - յուն - լատիներէն :

(1800-1850). — Տեսութիւն Հին Կտակարանի . — Տեսութիւն Նոր Կտակարանի . — Ապացոյցք Կրօնից . — Գաւանութիւն հայկական եկեղեցւոյ . — Մեկնութիւն ընդարձակ ' ժի՞ Թիմուցն Պօղոսի . — Բացատրութիւն հարականաց . — Ճառ յաղագս բղիման Հոդույն Սորոյ 'ի Հօրէ և յՈրգոյ . — Մեկնութիւն 'ի տաճ հատիր Սաղմոնաց Դաւթի . — Եղծ աղանդոցն Խուռերի և Կալվնոյ . — Յազգագույն Աստուածոյ . — Պատմական քրիստոնէական վարդապէտութիւն ընդարձակ :

(1850-1889). — Զատագովութիւն եկեղեցական գրոց ազգին՝ ընդգէմ Բարսեղեան սրբագրութեանց . — Աստուածաբանութիւն Տեսական . — Աստուածաբանութիւն բարյուական . — Ընտանի պատմանիք ընդգէմ անլորսից . — Պաշտպանութիւն քրիստոսական հաւատոյ . — Զատագովութիւն գրուածոց Ա . Ներսէսի Լամբրնացւոյ ընդգէմ դասախրացեց նորաւ :

**Իմաստահրականք — Իրաւագիտականք**

- (1750-1800).— **Քառահատորը ընթացք իմաստասիրութեան:**  
 (1800-1850).— **Իմաստասիրութիւն բարոյական .— Իրաւագիտութիւն .— Իմաստասիրական ճառք .— Տիրամարանութիւն Սուսէի .— Տրամարանութիւն Տիրամարսէի .— Վարդ իմաստասիրաց Փոց :**  
 (1850-1889).— **Տրամարանութիւն Տիրամարիք .— Հնդահատորը ընթացք իմաստասիրութեան .— Պրագիք իմաստասիրիք , և այլն :**

**Եկեղեցական գիտուրիւնք և պատմուրիւնք**

- (1750-1800).— **Պատմութիւն Աստուածաշնչի .— Վարք Սրբոյն Անտառն Աբբայի .— Տնաբայց .— Մազիկ վարուց սրբոց տօնելեաց և յիշատակելեաց :**  
 (1800-1850).— **Երկուսանն հատոր՝ լիակատար վարք սրբոց , ծանօթութեամբք .— Սրբազն պատմութիւն և վարք քահանայասկետաց Հռովմայ .— Վարք սրբոց համառօտ .— Վարք սրբոց Կուսանաց .— Վարք սրբոց լատին եկեղեցւոյ .— Տիրամարգիտութիւն եկեղեցական .— Պատմութիւն եկեղեցական .— Կէնցար Խրայէլացւոց և Քրիստոնէիք :**  
 (1850-1889).— **Երականք Աստուածածնի .— Համառօտ պատմութիւն Ա .Գը .րոց .— Առձեռն տօնարագիտառութիւն եկեղեցական , և այլն :**

**Այս ցուցակէս ՚ի բաց առեալ են շատ մը մանր գրուածոց հետ նաև Աղօրսգիրք , որք գործնական միջոցք են վերաբերութեան ընդ հոգի և ընդ Աստուած : ՚ի բաց թողած եմք նաև բազմաթիւ հոգեւոր-աստուածաբանական նախնեաց գրուածոց հրատարակութիւնս , զրոյ Ազգային-Մատենագրութեան կարգին մէջ պիտի դասենք , որոց մէջ ոչինչ նուազ նշանաւոր են նաև երկու անգամ ապագրութիւնք բովանդակ Աստուածաշունչ մատենին :**

**Բ**

**Միսիթարեան Միհարանութիւնն իրը սրբազն աւանդ ընդուներ է իւր Հիմնադրէն՝ գողցես երկու թեսք միանդամնյն յառաջ ընթանալու գէալ ՚ի զիտեալ նպատակն . այսինքն է զուգահաւասար հոգեւորգացման՝ ջանք ունենալ նաև ազգայնոց մոտաւորական կատարելագործութեան մասին , լաւ համոզուած լինելով որ երկրորդն անհրաժեշտ հարկաւոր է առաջնոյն , մարդս կազմուած լինելով ՚ի հոգւոյ և ՚ի բանականութենէ : Այս սկզբանն վրայ Միսիթարայ որդւոց հաւատարիմ կենալուն վկայ են մինչև ցայսօր Միսիթարեան Տպագրատանըս ՚ի լոյս ընծայած հրատարակութիւնք , յորս մտադիր քննողն պիտի տեսնէ որ ժամանակին գիտութեանց զարգացման համեմատ ըն-**

թանալու ջանքունեցեր են Միսիթարեանք, անընդհատ յարաբերութեան մէջ գնելով իրենց մորերն ընդ լւսաւոր հանճարս զանազան ազդաց եւրոպիոյ ։ Մենք այս հրատարակութիւններն կը բաժնենք ՚ի զանազան ճիւզս որոշ գաղափար մը կազմել տալու համար մեր ընթերցողաց, և ըստ այսմ մասն առ մասն ժամանակի կարգաւ ՚ի մէջ կը բերենք. սկսելով նախ այն դրֆերէն՝ որք դաստիարակութեան կը վերաբերին :

Դաստիարակութիւնն (կամ ըստ արդեայց կոչման մանկավարժութիւնն) ընդարձակ ասպարէզ ունեցեր է թէ ըստ բարոյականին և թէ ըստ ուսումնականին Միսիթարեան լիբարանութեան մէջ, որ հարիւրաւոր տարիններով այդ նուիրական և գերագոյն արուեստին զբազեր է թէ վանական շրջանին մէջ իւր ապագայ յաջորդութիւնը պատրաստելով, թէ ազգային զանազան դպրոցաց մէջ պարապելով յուսումն և ՚ի կրթութիւն մանկանց մերթի իր վարիչ և մերթի իրեն ուսուցիչ, և թէ իւր՝ սեփական վարժարանաց մէջ ՚ի Փարիզ, ՚ի Վենետիկ, ՚ի Քաղկեդոն, ՚ի Պօլիս, ՚ի Տրապիզոն, ՚ի Պարտիզակ և այլն: Այս ամենայն վարժարանաց ձեռքով ունեցած և ունենալիք արգեանց վրայ խօսիլն մեր նպատակէն օտար լինելով կամ անուղղակի վերաբերութիւն ունելով՝ յիշենք միայն զդասագրեանս, որք մեծագոյն մասն կը կազմեն՝ մանկավարժական նպատակաւ հրատարակուածներուն մէջ, եթէ ըստ լեզուական և եթէ ըստ զիտական մասին: Լեզուականաց մէջ կ'ամփոփենք քերականութիւններ, բառագրքեր. իսկ զիտականաց վերաբերեալքն կը յիշենք ուսումնական այլ և այլ ճիւզերու համապատասխանող խմբից մէջ, ըստ հետեւալժամանակագրական համառօտ ցուցակի, միայն գլխաւոր հրատարակութիւնները գնելով:

### Քերականորիշներ – Բառգիրք – Լեզուագիտականք

#### ԱԶԴԱՑՄՈՒԹ

(1700–1800).— Այրբենարան ։ Բառգիրք աշխարհաբառ (Անանեանէ) .— Հայկական բառարան. — Քերակ. Հայերէն (Սի. Արայի). — Քերակ. Հայերէն (Չամէկան):

(1800–1850).— Այրբենարան ։ Առձեռն բառարան. — Քերակ. Հայկագեան լեզու (Աւետիքեան). — Տարբեր հայ. քերակ ։ Ճեմորան դիտելեաց. — Վարժութիւն մանկանց. — Հմուտթիւն մանկանց. — Ցառք մերուուեան. — Հայկական բառգիրք. — Դուռն քերականութեան:

(1850–1889). — Այրբենարան պատկերազարդ. — Ճառ. յաղագս հնչման շեշտակ. — Բառգիրք աշխարհաբառ – գրաբառ (Ներմիւթեանէ). — Առձեռն բառարան յաւելուածովք. — Քերակ. Գարգացելող:

ՕՏԱՐՈՒԵՑՈՒԹ

- (1700-1800). — Քերակ. իտալ-հայ-տաճկ. (Աւետիքեան):
- (1800-1850). — Ալբրեհնարան յշյն-հայ. — Բառդիրք անգլ-հայ և հայ-անգլ. (Աւգերեան). — Բառգիրք գաղղ-հայ-տաճկ. (Աւգերեան). — Հայ-տաղղ. (Աւգերեան). — Քերակ. անգլ-հայ. (Աւգերեան). — Քերակ. Հայ-անգլ. (Աւգեր-Լորտ Պայրն). — Քերակ. Գաղղ-հայ (Բագրատ). — Քերակ. բազմանձուեան. — Քերակ. հայ-ռուս և ռուս-հայ. — Դուռն լատին քերականութեան. — Դուռն իտալ. քերականութեան. — Բառդիրք իտալ-հայ-տաճկ. ընդարձակ. (Զախարիանէան). — Նյոյն համառօտ. — Բառարան հայ-իտալ (Զախարիան). — Բառդիրք անգլ-հայ-տաճկ. հայ-անգլ-տաճկ. տաճկ-հայ-անգլ (Ս օմալ). — Բառդիրք հայ-անգլ և անգլ-հայ. — Տարեկք հասլերէն լեզուի. — Քերակ. իտալ-գաղղ. — Քերակ. հայ-գերմ (Ճինազլու):
- (1850-1889). — Բառդիրք անգլ-հայ և հայ-անգլ (Պետրոսէան). — Բառդիրք գաղղ-հայ-տաճկ. (Գանթարեան). — Քերակ. անգլ-հայ. (Գուրգենէան). — Քերակ. գաղց. հայ (Քերգեան). — Կրթութեան հայ-անգլ. լեզուի. — Քերակ. Հայ-իտալ (Մէջրապ). — Վարժութիւն գաղցիրէն լեզուի:

Հրատարակութիւնը

Խնքնագիր մատենագրութեանց և բարգմանութեանց նախնեաց:

- (1700-1800). — Աստուածաշունչ մատեան պատկերազարդ. — Աւեհնաբանութիւն. Ն. Լամբրոնացւոյ. — Ճաջոց հայկական (1686 Ռական). — Առակեք Միթիթար Գօշի. — Խորենացւոյ Գիրք պիտոյից. — Նարեկացւոց Մէկն. Երգոց Երգոյն:
- (1800-1850). — Ագաթանգեղեայ պատմութիւն. — Անանիա Շիրակացւոյ յաղաքը չափոց և կշռոց. — Խորով Անձեւացւոյ Մէկն. Պատարագի. — Աւետարան. — Բարզի վեցօրեայք. — Յաձախապատում Ս. Լուսաւորչի. — Մատենագր. Պատմի Այյալթի. Կորեան և Մամբրէի. — Եղիկայ Եղի ազանդոց. — Մատենագր. Եղիշէի. — Ժամանակագրութիւն Եւսեբիոսի. — Մատենագր. Ս. Եփրեմի. — Գլակայ պատմ. Տարօնյ. — Լամբր. Մէկն. Ս. Պատարագի. — Լամբր. և Գրիգորի Տալայոյ թուղթք և հառք. — Պատմ. Հայոց Լատոիդերացւոյ. — Խորհրդատետր հայկական. — Կոր Կատակարան. — Պատմ. Թաթարաց Հեթմայ. — Մատենագր. Մանդակունաց. — Մատենագր. Պատմութիւն. Կատակարաց. — Պատմութիւն. Գայկական. — Մէկն. Գործոց Առաքելոց Խըմբագիր. ինախնեաց. — Առակեք Միթիթար Գօշի. — Հերացւոյ չերմանց միթիթարութիւն. — Պատմ. Հայոց. Խորենացւոյ. — Մատենագր. Խորենացւոյ. — Մատենագր. Նարեկացւոյ. — Նարեկացւոյ ողբերգութիւնք. — Նարեկացւոյ ներբողեանք և տաղք. — Շնորհա-

լոյ ատենաբանութիւն և նամականի .— Ասկերերանի Մէկն . Մատթէի .— Պատմ . Մէծին Ազէքսանդրի .— Սերերիանու Հառք .— Ակրաք .— Վարք Ս . Գէորգայ զօրավարին .— Ղազարայ փարափեցոյ պատմ . Հայոց .— Փաւասոսի պատմ . Հայոց .— Մատենադրութիւնք Յովհ . Օհնեցւոյ , Թէոդորի Քոթենաւորի և Սահակայ Կաթողիկոսի .— Ենորհաւոյ թուղթ ընդհանրական .— Ենորհաւոյ շափաքերականի :

( 1850-1889 ).— Արիստիգեայ փիլիսոփայի Հառք երկու .— Աւտարան .— Սահ . մանք բէնեդիկտեան վանաց ( Թարգմ . ի Լամբր ) .— Գիրք վաստակոց .— Եղիկէի պատմ . Վարդանանց և մատենադրութիւնք .— Եւսեբէայ Պատմ . Եկեղեցւոյ .— Ղարուժնիա Թուղթ Ազգարու .— Խորհրդատեար Հայկական .— Կիրակոսի Գանձակեցւոյ պատմ . Հայոց .— Նոր Կտակարան .— Տաղաջափութիւնք Մագիստրոսի .— Մատենագր . Մանգակումեց .— Ժամանակաբր . Մէքայիշի Անորուց ( գաղղ ) .— Աւակը Միիթար Գօշի .— Պատմ . Հայոց . Խորենացոյ .— Մատենագր . Խորենացւոյ .— Խորենացւոյ աշխարհագր .— Ասկերերանի Մէկն . Թղթոցն Պաւլոսի .— Ասկերերանի Հառք քաղաքակը .— Ասկերերանի ճառ . ի Ս . Լուսաւորիչ .— Ասկերերանի մէկն . Եսայեայ .— Պատմ . Վրացի Շուանչիրէ .— Ակրաք .— Սոփերը Հայկականի .— Վարդանայ պատմ . Հայոց .— Վարք Հարանց .— Վարք և վկայաբանութիւնք Սրբոց .— Ղազարայ Փարագանեալ պատմ . Հայոց :

### Փարզմանորիշնք մատենից Նախնեաց յօտար լեզու:

( 1800-1850 ).— Ժամանակագրութիւն Եւսեբեայ յոյն-հայ-լտ .— Ատենաբանութիւն Լամբրոնացւոյ Հայ-խտալ .— Խորհրդատեար Հայ-խտալ .— Խորենացւոյ պատմ . իտալ .— Խորենացւոյ պատմ . Հայ-գաղղ .— Ենորհաւոյ ընդհանրական թուղթ լտա .— Ենորհաւոյ մատենագր . լտա .— Ենորհաւոյ Հաւատով խոստովանիմ ( 12 լեզուով ) .— Սերերիանու Հառք Հայ-լատին .— Փիլոնի Մէկն . ծննդոց , Հայ-յոյն-լատ .— Օհնեցւոյ մատենագր . լատին .— Օհնեցւոյ Հառք ընդգետ Երևութականց . լատին :

( 1850-1889 ).— Հայոց երգք ռամկականի , անդզ .— Սահմանիք Բնենեգիտեան վանաց . լտա . Ս . Եփրեմի Համաբարբառ . մէկնութիւն աւետարանին լտա .— Խորհրդատեար Հայ-գաղղ .— Խորհրդատեար Հայ-անդզ .— Խորհրդատեար յարմարեալ գանձակի և նուագարանի և եւաճայն երգոց եւրոպական խաղիք .— Հարականիք Աստուածածինի . լտա .— Ենորհաւոյ Հաւատով խոստովանիմ . տպագրեալ 36 լեզուու .— Ասկերերանի Հառք . ի Ս . Լուսաւորիչ . Հայ-լատ .— Ասկերերանի Մէկն . Եսայեայ . լտա .— Անսիզք Անափայ , Սմբատայ Գումագուսապի :

**Ինքնազիր քերուրամբ և հոկտորականը:**

- (1700-1800).— Ճարտասանութիւն Ագոնցի:
- (1800-1850).— Քրիստինէականն.՝ Ճառք և ներքողեանկ (Թրեանց).— Առձեւ ուժն ճարտասանութիւն. — Բանաստեղութիւն և արուեստ չափական ոտից. — Առձեւն դիցարանութիւն. — Խոսրով մեծն և Սմբատ Ա. (Ոլդերդութիւնք)՝ Ճարտասանութիւն (Սեթեան):
- (1850-1889).— Նուազք Հ. Դ. Ալշանի. (Ծ հատոր).— Քերթուած մարդոյ. — Հայի գիւցաներդութիւն. — Ճարտասանութիւն (Գանձարեան). — Բուրաստանք Արուրի Որմզանայ. — Գիրք Յոբայտազափեալ. — Օրհնութիւնք հին կոսկարանաց տապաշափեալ. — Պունիկիսնոսիք քերթուածք հայերենք. — Տաղք Միկթարեան Վարդապետաց:

**Ինքնազիր ազգային**

**պատմորիւն, հնախօսորիւն, աշխարհագրորիւն:**

- (1700-1800).— Պատմ. Հայոց, ընդարձակ (Զամեեան):
- (1800-1850).— Պատմ. Վարույց Միկթարոյ Արքան՝օր. — Դաւանութիւն հայկան Եկեղեցւոյ. — Պատմ. գաղթականութիւն Անեցւոցի Արիմ և ի Կալիցիս. — Պատմ. Հայոց (Թերձ՛իմանեան). — Հնախօսութիւն Հայաստանի (Խնձիմեան). — Ստորագր. հին Հայաստանի. — Նոր Հայաստան. — Խրախնն պատմ. Հայոց. Կիւղարի, պատմ. Հայոց, տաճկերեն. — Պատմ. Հայոց (Սեթեան). — Նկարագրիք պատմութեան հայկական գրութեան Խոտալ (Սօմալ). — Յուցակթարգմանութեանց նախնեաց:
- (1850-1889).— Նոր Հայաստան Հ. Դ. Ալշանի. — Հայկ և իւր ցլջանն. — Բնակութիւն Հայաստանի. — Ցուցիկ հայրենեաց Հայոց. — Նշմարք և Նշնարք Հայաստանի. — Տեղագրութիւն Շիրակայ. — Երկրագիտութիւն հայկական. — Ս. Ն. Շնորհալի և պարագայ իւր. — Ախուան. — Զատառավութիւն Եկեղեցական գրոց աղդիս. — Պատմ. հին հայկական գրութեան. — Պատմ. նոր հայկական գրութեան. — Մատենագրութիւն հայկական. — Ընմարք հայկա. պունք. — Հայաստան և Հայք (անդշ). (Խսակերտեանց). — Մաշտոց հայկական և անդշ. (Խսակերտեանց). — Նշմարք Վանաց Ա. Պաշարու. — Լամբրինացի ամբաստանեալ և շատագովեալ, իսալ. — Լանկուայի գանձարան հայկական յիշատակարանաց. — Տեղագր. Հայոց մեծաց (Սարգիսեան). — Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանի և Հնախօսութիւն Հայաստանի (Գաշունի):

**Օտարազգի պատմորիւն, հնախօսորիւն, աշխարհագրորիւն**

- (1700-1800).— Աշխարհագրութիւն ընդարձակ, 11 հատոր. Գիրք. Ագոնցի. — Անարանոց Բիւղանդեան (Խնձիմեան):

(1800-1850).— **Պատմ.** Օսմանեան պետութեան . . . **Պատմ.** Թուաց . . . Արք-  
բազան պատմութիւն և վարք քահանայսպետաց Հռովմայ . . .  
**Պատմ.** Գոնոտոսի . . . Ընթացք ընդհանուր պատմութեան (Հին  
ազգաց , Հռովմայեցոց , Միջին դարու , Նոր ազգաց , Ժամանա-  
կակից) . . . Համառօս պատմութիւն հին ազգաղ . . . Տարեց աշ-  
խարհագրութեան (Եազրճեան) . . . **Պատմ.** աստուածաշնչի (Զօհ-  
րապետն) . . . Թէոփրաստեայ նկարագիրք . . . Դարապատում . . .  
**Պատմ.** ազգաց (Ճարեան) . . . **Պատմ.** Գաղղիոյ . . . **Պատմ.** Յամա-  
նեան (թագաւորաց և վեզիրաց) . . . **Պատմ.** Ս . Գրոց (Սեթեան) . . .  
**Պատմ.** Չորից ինքնակալութեանց . . . Սառագր . . . Կալկաթայի . . .  
**Պատմ.** Եկեղեցական (Փափազեան) :

(1850-1889).— Աշխարհագր . . . Ընդարձակ . . . պատկերազարդ . . . Հ . Ղ . Ալիշանի . . .  
Նկարագիր վարուց երկելի արանց . . . **Պատմ.** Յոյն . . . Հռովմ . . . և  
սրբազն գաղրութեանց . . . **Պատմ.** գաղրութեան Միջին և Նոր դա-  
րուց . . . **Պատմ.** Փանհկ-Բրուս . . . և քաղաքական պատկերազմին . . .  
Ուշեղորութիւն 'ի Պոմպէյ Հնդկաց . . . Կիրոնի բացատր . . . արաբա-  
կան դրամոց . . . **Վարք** Լուդովիկին ծջ . . . Ընդհանուր ժամանա-  
կագրութիւն . . . **Պատմութիւն** արևելեան հին ազգաց և Յունաց  
(Ճնացեան) . . . **Պատմ.** Ժամանակակից (Խուրիսան) . . . **Պատմ.** վա-  
րուց Կայսարյա . . . Բուսաբանութիւն (Սափարեան) . . . Երկրա-  
բանութիւն (Սափարեան) . . . Աշխարհագրութեան տարեց (Ստե-  
փանեան) . . . Տարեց աշխարհագրութեան (Եազրճեան) :

**Թարգմաննուրիշներ յօստարաց 'ի հնաց և 'ի նորոց**

(Քերրողականք , Ճարտասանականք , Պատմականք , Հմուկանք)

(1800-1850).— Միլտոնի Դրամիս կորուսեալ . . . Գիշերք Եռնկի . . . Մահ Աբե-  
լի . . . Կեսերի . . . Կիկերոնի յաղագս պատշաճեց . . . Կոլզմիթի պատմ .  
Հռովմայեցոց . . . Հոմերի Եղիսական (Թովմաննեան) . . . Հոմերի  
Ռիտսական (Թովմաննեան) . . . Հոշիոսի Եղերերգութիւնք . . . Ժազո-  
վածոյ Թատրութեանց Մետաստասիոյ (տճկ) . . . Ոսկերերանի  
համար (Թովմաննեան) . . . Պարթէլլեմոյ Ուշեղորութեան (Անգլար-  
ուայ) . . . Պլուտարքեայ Ջուգակինք երկելի արանց . . . Պոսուէի  
Խօսք ի վեպա ազգաց . . . Ռուէնի պատմ . . . Հռովմայեցոց . . . Ռո-  
ւէնի Հասխոսութիւն և հին պատմութիւն . . . Անենեկայի Ճառք ի-  
մաստասիրականք . . . Վիտայի քրիստոսական . . . Վիրդիկեայ Անեա-  
կան . . . Վիրդիկեայ Մշակականք և Որատեայ արուեստ քերթողա-  
կանք . . . Տակիտեայ Արդիգոյա . . . Գերբանացիք . . . Հռեատրք . . . Օդու-  
տինոսի Յաղագս քաղաքին Արտուծոյ . . . Արկածք Տելեմաքայ  
(Ճախչակեան) . . . Ֆենէլոնի վարք իմաստափրաց . . . Կենցազ  
Խորոյէլացոց և քրիստոնէից :

(1850-1889).— Մերովակէ . . . ողբերգ . . . Աղբիկերեայ . . . Ճաշակ յօյն և լատին ճար-  
տարիսութեան . . . Ճաշակ հին և նոր ողբերգութեանց . . . Ռո-

տուրի Հաւըերդունիք. — Պոյիկոսո, ողբերգութիւն Գոռնկյալի. — Աղերսաւորք, ողբերգ. Եւրինիդեայ. — Թուկիդիդեայ պատմ. Պէտապահսական մարտին. — Քերդողական մտածմանք Լամարդինեայ. — Ֆէկորեայ պատմ. Անդիլոյ. — Ցիշատակարանք Կուռարու. — Կոլզմիթի ի գիւղն մասյի. — Գոթողիա, ողբերգ. Ռասմինի. — Հոմերի Խիմակոն (Բագրատառնի), — Թատրերգութիւնք Մետաստախոյ. — Միլտոնի Կորուսա գրախոնին (Բագրատառնի). Սաղկաքաղ Հատուածք արձակ և քերթուածք ի հին և ի նոր մատենագրաց. — Արիստոփեմ ողբերգ. Մնիթեայ. — Խամբա, Լորտ Պայրընի. — Լորտ Պայրընի քերթուածք. — Պղատոնի Փեղոն և տրամախօսութիւնք. — Պոսուէի գամբանականք. — Խամբինի Երդի կրօնս. — Փեղոս, ողբերգ. Խամբնի. — Սալուստեայ պատմ. Կամիլնեան և Յուգուութեան պատերազմոց. — Վիտայի քրիստոնուակոն. — Վիրդիւեայ Խնէական. — Վիրդիւեայ Հովուերգութիւն. — Տակիտեայ տարեգրութիւնք. — Տանգեի Հատընաթիք յաստուծային և եկալարանէն Փոսոկի Գիրեզմանք. — Քնար ամերիկեան. — Խնելոնի Արկանք Տէլեմացայ (Աւրեմիւգեան):

### Տօմարականք-Թուրաքանականք-Բնական գիտուրինք

(1700-1800). — Թուարանութիւն (Աղամալեանի). — Արուեստաբանութիւն (Աղջազաքեանի). — Մշանչենաւոր պարզատումար. — Երկիմբակա. — Երկրաշափութիւն տեսական և գործնական (Պրոնեան):

(1800-1850). — Բժշկականնիւթ — Գիմաւորք. — Տարերք Երկրաշափութեան (Ճարեան). — Թուարք. բանական. — Պատմ. Թռչնոց առաջին դասու (Պիւֆֆն). — Եռանկիւնաշափութիւն (Պրոնեան). — Խեռատէնի բժշկականութիւն փորմանակոն և բառագիրք բժշկական իննէկըրուաւ. — Տօմարագիտութիւն քաղաքական և եկեղեցական (Սիւրեկէան). — Թուարանութիւն (Սիւրեկէան). — Տեսարան աշխարհի. — Երկրաշափութիւն գործնական (Փափազեան). — Արուեստ գծարար ընդորիսակութեան (Փափազեան). — Կրկնառումար վաճառականութեան (Փափազեան) — Հաշուեառամք պարզագիրք, գրաբար և աշխարհաբար (Փափազեան). — Նաւուղութիւն և եւանակք (Ողուցուխեան):

(1850-1889). — Տարերք Մոււարանութեան (Գալֆա). — Թուարանութիւն ընդարձակ (Պապիկեան). — Տարերք Մոււարանութեան (Պապիկեան) և բանալիլութման. առաջարկութեանց. — Տարերք գրահաշուկ (Պապիկեան). — Տարերք Երկրաշափութեան (Պապիկեան). — Սոր ատրերք գրահաշուկ (Պապիկեան). — Տարերք Երկրաշափութեան (Պապիկեան). — Բանալիլ ընական և բառութից. — Տիեզերագիտութիւն (Սահակեան). — Երկրաշափութիւն (Սահակեան). — Առանձնա տարանկարութեան (Փափազեան). — Համարողութիւն, Բնարանութիւն, Տարրարանութիւն, Մեքենականութիւն, Արևետառաբանութիւն (Պախունի):

**Վիպասանորիւնք-Բարոյավեպ-Առաճք**

(1800-1850).— Առակեք Եղովրոսի .— Մատենագարան մանկանց .— Ուսուչն՝ սոնի արկածք .— Պող և Վիրդինէ , աշխարհաբար :

(1850-1889).— Թագաւոր Հերանց .— Առածք տաճկ . համաօստ (Թարդմտ. նեալ ի զանազան լեզոս) և ընդարձակ .— Մաղկաբաղ Առակեք . Մրցանակ .— Աքսորականիք ի Սիսերիա .— Առածք Եպիկտիտ . անայ .— Զօսօսարան մանկանց (Մանդեան խթումը . Խորհրդական քերդը , Մօր մը քաշած վատերը , Մադդաղինէ , Զկնորսին հիւզը . Մեր Պիւդման) .— Բնելսոնը .— Լճուկիս ձկնորսը .— Առակեք Վրուրի Ար. մըզգանայ .— Փողովրդական առածք տղայինք .— Առածք Տաճ. կաց .— Մանծ սնեայ Խօսեցեալք .— Աղօւակ (Մերիմեկ) .— Եղուք ընտիր պատմութեանց .— Արա Գեղեցիկ և Շամբամ (Պարրէլ) .— Յովակէ Գեղեցիկ (Պիթուակ) .— Աղբար Թողմասի անակը .— Ուսուչնունի արկածք .— Պող և Վիրդինէ , աշխարհաբար և գրաբար .— Բիշչելու (Ունդինէ) .— Փարիուլու կամ եկեղեցի գետանդամիւնաց (Ուայզման) .— Անաս , Սէր , ծնողական .— Փերբոսի առակեք .— Քուշներեանի առակեք .— Ֆլորիանի Նուման Պոմպիլիոս :

**Պարքերական հրատարակորիւնք**

(1700-1800).— Օրացոյց ուրեկան (1757-1889)

(1800-1850).— Դիտակ Բիւլզանդեան (1812-1816).— Եղանակ Բիւլզանդեան . բազմավէպ ամսագիր (1815-20) բազմավէպ կիսամենայ օրագիր (1843-1858)

(1850-1889).— Բազմավէպ , ամսօրեայ օրագիր (1838-1872) .— Բազմավէպ Հանդիսարան , եռամսեայ ուսումնաթերթ (1873-1888)

**Այխարհացոյց տախտակք և ատլասք**

(1700-1800).— Աշխարհացոյց չորից մասանց ոչխարհէ .— Հայաստան .— Պաղեստին կամ Երկիր Աւետեաց .— Վոսփոր կամ նեղուց կ. Պուսի .— Օմանեան Տէրութիւն .— Համատարած Մելքադոր .— (Համատարած մեծ , փորագրեալ յլլորէքտամ , յամին 1695. ույց առ մեջ գտանին պղնձեայ տախտակքն) :

(1800-1850).— Ուռափ Հայաստան .— Սեւ ծով և ափունք .— Խրիմ .— Մար. մորս և ափունք .— Եւրոպայց Տաճկաստան .— Ասից Տաճկաս. տան .— Ալաւաս աշխարհագրական , մեծագիր (Համատարած կիսազունաց .— Մոլորակային դրուիւն .— Ասիտ .— Օմանեան Պիտուրիւն .— Հայաստան .— Եւրոպա .— Ափրիկ .— Ամերիկա .— Հիւսիսային .— Ամերիկա Հարաւային .— Ովկիանիա) .— Ալաւաս աշխարհացոյց փորագրիր (Այխարհազունտ մակարդակ .— Համատարած կիսազունտ .— Եւրոպա .— Այխարհ ժանօր առ

նախներ . — Գտաղիա բաժանեալ 'ի նահանգս . — Ադրիկէ . — Ասիս . — Մասի Ամիոյ բատ Գրոց Սրբոց և բատ նախնի աշխարհացրաց . — Հիւսիսային Ամերիկա . — Հարաւային Ամերիկա . — Ովկիանիա . — Հայաստան բատ նախնի աշխարհացրաց ) . — Աշխարհահոյց Ռուսաց Հայաստանի .

( 1850-1889 ). — Աշխարհացրաց քարտ Կիցեկիոյ կամ Ախտուանի . — Աշխարհացրաց քարտ Այրարատ գաւառի ընդ մամկօք .

Այս համառօտ ցուցակէս 'ի բաց թողեալ են երեսնիւ չափ մանրիկ պատմական - ուսումնական - հմտական գրուածներ , ինչպէս նաև ոչ բազմաթիւ հրատարակութիւններ յօտար լեզուս :

Այս ամենայն հրատարակութեանց ներքին արժէից վրայ խօսք ընեն՝ երկայնաբանութիւն կը պատճառէ յօդուածիս , եթէ ոչ և աւելորդախօսութիւն , հարիւրամեայ տարեաց ընթացքի մէջ բատ բառականին լաւ ծանօթացուած և կշռադատուած լինելով յազգայնոց և յօտարաց ասոնց յարդն ու որպիսութիւնք : Շւսափ անձնագով չերեւելու համար՝ այլոց կը թողունք զայնս քննեն ու գրուատել , թէ արժանի են գովակեանց . իսկ մենք կը փութանք խօսքերնիս վերջացընել՝ յիշեցընելով տպագրատանս ուրիշ կարեռ արդիւնք մ'ալ , այն է ազգին մէջ տպագրական արուեստի յառաջադիմութիւն և զարգացումն տուած լինեն , և 'ի ներկայիս ևս չամաշեն նաև յայսմ' մասին 'ի միցումն գալ ընդ ընտրելագոյնս 'ի տպարանաց ազգայնոց 'ի է . Պոլիս , 'ի Տիգիս և այլուր : Գեղեցիկ տպագրութիւն , տառից վայելլութիւն , անսխալութիւն կամ սակաւ սխալանք , ազնիւ թուզթ , պատկերազարդ չքեզ հրատարակութիւնք , ասոնց վրայ աւելցընենք նաև ճաշակով կազմք գրոց , հարիւր տարիէ 'ի վեր յատկանիշ համարուած է Մինիթարեան Տպարանիս առ ազգայիննաց ըստ նոցա գրաւոր և անզիր վկայութեանց : Յայսմ' մասին ոչ յազգայնոց միայն , այլ և յօտարաց միշտ գովիստ և խրախոյս սասացած է Տպարանս , և երբեք երբեք նաև զազդային անունն ներկայացուցած լինելով իւր հրատարակութեամբք 'ի զանազան և ոչ յանշան Աշխարհահանդէս՝ պարծանքք կը պահէ իւր ընդունած մետալներըն և վկայազգերներ . 'ի նշանաւորաց յիշենք նորա ընդունած արծաթիք մետալք 'ի տպագրական մրցութիւնս լոնտոնի ( 1862 ), Փարիզի ( 1855-67-79 ), Փլրեննտիոյ ( 1864 ), Վենետիկոյ ( 1872 ), Վիեննայի ( 1873 ), և այլն , ինչպէս նաև զկառչին վկայագիր պատուոյ յաշխարհագրական հանգիսին վենետիկոյ ( 1882 ):

1) Յայսմ' մասին եթէ յետ ամենայն խստապահանջ աշալքութեան և հսկողութեան յակամայս սակաւաթիւ վրիպանք ուրեք ուրեք տեղի ունեցած են 'ի հրատարակութիւնս մեր , գրեթէ անհրաժեշտ արգիւնք է այն տարազքի գրաշարաց և տպագրողաց , զորս հարկ է 'ի գործ քարել :

¶

Վերոյիշեալ այնքան հրատարակութիւնք ըստ կրօնականին և ըստ ուսումնականին յայտ է ունեցեր են յտղիս իրենց ազգեցութիւնն յընթացս տարեաց . և այս ազգեցութիւնս ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն իսկ Մխիթարեան Միաբանութեան գարաւոր բռնած ուղղութիւնն և գործունէութիւնն :

Ի կրօնականին փափաքած են միշտ և կը փափաքին նաև այժմ՝ Մխիթարեանք՝ որ ազգն ընթանայ այն ուղղութեամբ և ճշմարտութեամբ՝ որով ընթացեր են մեր նախնի երանաշնորհ Հարք և Հայրապետք չորրորդ և հինգերորդ գարուց և նոցա հետևող աշակերտքն՝ պարծանք Հայաստանեայց եկեղեցւոյն՝ դանք Ա. Թարգմանչաց, որոց պանծալի շարունակութիւնն կը ծաւալի մինչև Ներսիսեանց ժամանակ . որոց ուղղութիւնն և ճիգն եղած է գեկեղեցին հայկական միշտ համակից պահել՝ ի միութեան ընդ հանրական Եկեղեցւոյն Քրիստոսի, գորով և ինքն մին յանդրանիկ գտտերաց նորոյ կտակին . և 'ի համաձայնութեան անդ գեղեցիկ զանազանութիւն պատճառել յատուկ ծիսական արարողութեամբք, որք և յընդհանուր միութեան անդ հաւատոց՝ կը կազմեն նոյն եկեղեցւոյն ազգային սեփական յատկանիշն, որով հայկականն կը զանազանի յասորւոյն, 'ի յոնականէն և 'ի հռովմէականէն իւր ինքնուրոյն գեղեցկութեամբ : Այս ճշմարտութեանս Խորին համոզման արդիւնք են և քարոզք՝ Մխիթարեանց վերոյիշեալ ամենայն կրօնական և բարյական հրատարակութիւնք :

Մխիթարեանց ուսումնական ազգեցութիւնն՝ իրեն երկու տեսակէտ ունեցեր է, այսինքն՝ նախ նկատել զհայ ազգն իրրե մասն ընդհանուր մարդկութեան, և երկրորդ՝ նկատել զայն իրրե առանձինն ազգայնութիւն կազմող ժողովնուրոց : Առաջին նկատմամբ ջանացեր է ծաւալի նորա մէջ ամէն տեսակ կարևոր ուսումն և զիտութիւնն թէ ըստ տեսականին և թէ ըստ գործնականին . իսկ երկրորդիւ ամենայն ճիգն թափեր է ազգին ներկայն 'ի հազրդակցութեան գնելու իւր մոռցուած անցելցյն հետ, և ազգել նորա սրտին մէջ իւր սեփական անձնանաշութեան իրաւունքն, եթէ ներելի է այսպէս բացատրել :

Այս երկրորդ տեսակէտին մէջ կը կայանայ գլխաւորապէս Մխիթարեան Ցպագրատան մեծագոյն արդիւնքն և ծառայութիւնն զոր մատուցեր է ազգային լեզուի և պատմութեան : Լեզուի հետ սերտ միացած է ազգին գրականութիւնն, նորա անցեալն, նորա պատմական կեանքն, նորա բավանդակ մտաւոր և հոգեկան ձկտմունքն յընթացս հազարաւոր գարուց, միով բանին՝ նորա ամբողջ գոյութիւնն . լեզուն է միայն որ կը կապէ զանհատ որ իւր ազգային ամբողջութեան հետ : Այս սկզբունքս եղած է ուրեմն զիտաւոր միջի ուղղութեան Մխիթարեանց, որով միշտ առաւելագոյն կարեսրութիւն տուեր են

Հայկական թէ ներկայ և թէ մանաւանդ հին լեզուի զարդացման։ Այս սկզբանս արդիւնք են թէ գրաբար և թէ աշխարհաբար լեզուի բազմաթիւ քերականութիւնք և բառազիրք, որովք ճիշտ ճգնած են Մխիթարեանք ջախջախել որչափ հնար է՝ օտար լեզուաց ազգեցութիւնն, որ հակառակ է հայկական ազգայնութեան ոգույն։ Այս սկզբանս արդիւնք են մեր հին մատենազբաց կարևորագոյն զրուածոց հրատարակութիւնքն, որոց թիւն քառասնի չափ հատորներ կը կազմեն։ Այս սկզբանս արդիւնք են, միով բանիւ, Մխիթարեան Տըպարանին իւր հարիւրամեայ ընթացքին մէջ ազգային պատմութեան, աշխարհագրութեան և հնախօսութեան նկատմամբ 'ի գործ զրած հետազօտութիւնքն, որը առանց հին լեզուի գիտութեան մեռելու թեան մէջ ժաղոսած պիտի մնային, և ամէն կողմն ցան և ցիր ցրուած և ցեցակեր ձեռագիր հատորոց հետ պիտի լնուէին անհետանային։

Ծանօթացընել ազգին իւր պանծալի անցեալն, որով ուղղել զներ կայն, թէպէտ և կարենորագոյն և առաջին նպատակ եղեր է Մխիթարեան Տպագրատանս, այլ ոչ և վերջին սահման իւր անդրագոյն ևս ձկտմանց։ Ոչ միայն ազգն պիտի յարգէ իւր անցեալը, այլ հարկ է որ օտարազգիք ևս ոչինչն նուազ վերահասու լինին այդ ազգին անցելցն մէջ կրօնից և Գիտութեանց մատուցած օգտաւէտ ծառայութեանցն։ այսու անուղղակի կերպով յայտանիշ կը լինին նոյն ազգին այժմեան սերբնեան ձիքերն և յարմարութիւններն՝ զարգանալու ամենայն ճիւզի վերաբերեալ գիտութեանց և արուեստից մէջ, ոչինչ նուազ քան զարևմտեան քաղաքակրթեալ ազինս։ Այս նպատակաւեղած են հրատարակութիւնք՝ մեր զանազան նախնի գրուածոց յայլ և այլ լեզուս, ինչպէս կը տեսնուին վերը զրուած ցուցակին մէջ։ Հըրատարակութիւնք՝ որը բովանդակ Եւրոպիոյ յարգել տուին հայ ազգին նախնի գրականութիւնն ենոցա ժրաշան գործունէութիւնն, որով 'ի սուլ ժամանակի հայկական գրաբութեան շտեմարանին մէջ ամբարեր են հայացընելով զպիտուականագոյնն և զամենայարգն ասորի և յոյն մատենագրութեան, և ոչ սակաւ ևս այնպիսի գանձեր՝ որը իսպառ 'ի կորուստ պիտի մատնուէին առանց հայկական մատենագրութեան։

\* \*

Համառօտ տեղեկութիւն մը Մխիթարեան տպարանի պատմութեան մասին՝ վերջաբան համարուի այս յօդուածիս։

Մխիթարեան տպագրատունս՝ որ այսօրուան օրս իւր ներկայ շքեղ և փայտուն վիճակին մէջ վանքի հազարաւոր այցելուաց հետաքրքրութեան, գոհութեան և զովութեանց առարկայից մին եղած է, 'ի սկզբան անդ գոյութիւն ունեցաւ կղզեկիս անձկագոյն սահմանին անկեան մը մէջ, յընթացս 1788 տարւոյն։ Յառաջ քան զայս թուական,

ինչպէս հետաքննողք կրնան մեր հին հրատարակեալ գրոց ճակատ՝ ներուն մէջ տեսնել, Մխիթարեանք ստիպուած էին իրենց տառերն յանձնել վենետիկ քաղաքին մէջ եղած տպարաններէն միոյն և կամ միւսոյն, և այն տպարանին մէջ հայ լեզուի համար սեփականեալ մի կամ երկու գրաշար պահելով տպագրել իրենց գրուածներն, յաղթելով բազմադիմի նեղութեանց և անյարմարութեանց որոց զիսաւորներէն մին էր նաև վանքին հեռաւորութիւնն 'ի քաղաքէն, որով կարեի չէր պէտք եղած հսկողութիւնն ընել. վասն զի այս պարագայէս գործաւորք շատ անգամ օգուտ կը քաղէին գողնալու հայկական տառից կապարի քանակէն, որք միշտ 'ի տուգանս վանքին կը լինէին. 'ի բաց թողեալ նաև տպարանատեարց 'ի գործ դրած անհոգութիւնն և կամ յարուցած անդադար վիճերն և պահանջներն. որոց հետ հարկ էր շատ զգուշաւոր և մեղմով վարուիլ:

Այս և այսպիսի գժուարութիւնք փոխացին զԱխիթարեան Հարս՝ իրենց սեփական տպարան մը կազմելու Ս. Ղազարու կղզեկին անդորրութեան մէջ, վանական հսկողութեան նեղըն. « Արով (ըստ բանից ժամանակագրի անցից վանացս) զերծաք 'ի բիւրապիսի վնասուց և յաշխատութեանց արտաքին տպարանաց » Այս տպագրունս 'ի սկզբան կազմուած էր երկու բաւական ընդարձակ սենեակներէ և շտեմարանով. յետ ժամանակաց, ներկայ դարուս ըսկիզբները, երբ Ս. Ղազարու կղզեակն ընդարձակեցաւ՝ մասն մի ծովուն ցավեցընելով, տպարանին աեղն ևս փոխուեցաւ. նոր ձևացած երկրին վրայ ընդարձակ մաս մը սեփականուեցաւ այս հաստատութեան, իրեն ամենայն կարեոր մասամբք: Բազմացան նաև դրաշարաց թիւն և տպագրութեան մեքենայք: Տպագրատանս՝ ծովուն անջրպետա քաղաքէն ունեցած հեռաւորութիւնն ստիպեց յատուկ բնակութիւն և կամ ննջարան մ'ալ սեփականել աշխատաւորաց, որով հաստատուն բնակութիւն ունելով 'ի վանս, կիւրակի և տօն օրեր միայն իրենց ընտանեաց քով կը վերագառնային: Այս սեն կը շարունակուի նուև մինչև ցայսօր: Դարուս ընթացքին մէջ տպարանին նիւթական ձեն քանի մ'անդամ բարեփոխութիւններ կրեց, ժամանակին և պարզպայից պահանջման և կամ ճաշտակի զարգացման համեմատ. մինչև ստացաւ իւր այժմեան գեղեցիկ վայելութիւնն, որով ամենայն այցելուաց համակրանքն իրեն կը գրաւէ:

Ժամանակին զարգացման համեմատ տպագրատան մեքենայք 'ի սկզբան հաստատութեան տպարանիս՝ էին փայտաշէն մամուլներ, համաձայն ժամանակին միւս տպարանաց. այլ գարուս առաջին կիսուն միջաժամանակին, այն հին մամլոց փոխանակեցին գեղեցիկ և ամենընտիր ձուլածոյ նոր անդգիտական մամուլք զանազան մեծութեամբ, յորոց ոմանք նաև այսօրուան օրս զարդ են տպարանիս, և քաջազէպ յարմարութիւն կը կազմեն վերջին ժամանակներս ստա-

շուած կատարելագործեալ անդղիակոն և գերմանական արտգաշարժ մեքենայից հետ . զորս անդադար գործունէութեան մէջ կը պահէ շարժիչ գեղեցիկ գերմանական գործի մը , որ և փոխագարձ իւր շարժման և զօրութեան մնունդ կ'ընդունի յատուկ տպարանիս համար ստացուած անդղիական կազմածին մեքենայէ մը :

Տպարանի ամբողջութեան լրում կու տայ ներկայիս մէջ նաև նորագիւտ մեքենաներով կատարելագործուած կազմատուն մը , իւր ընտիր ճաշակաւ կազմած գրքերով :

Տպագրատանս յառաջադիմութեան հոգն , թէպէտ և յատկապէտ յանձնուած է միշտ վանական չօր մը հսկողութեան , այլ վանքի վերատեսուչ Արքահարց սեփական խնամոց և ուշադրութեան մերձաւոր և սիրելի առարկայ եղած է . իսկ առաւելագոյն ևս եղանակաւ այս վեհագոյն խնտմակարութեան պարտական է տպարանն իւր ներկային մէջ : Միաբանութեանն վարչութիւնն ունեցեր է միշտ և պիտի շարունակէ նաև յապագային իւր հոգն ու մեծագոյն խնամքն , քաջ գիտելով որ այս հաստատութեանս կենդանութեան և զօրծունէութեան հետ՝ սերտ կապակցութիւն ունի՝ Միխիթարեան Միաբանութեան բարոյական կեանքն և ազգային նշանակութիւնն :

Հ. Աթուաս Տիրուեան

## ՆԵՂՈՍ

### ԵԱԲԱՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ ՑԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ՆԵՂՈՍ լրագոյն նպաստակն պիտի լինի ազգային յառաջադիմութեան համար իւրովսանն ծառայել եւ լինել յօդ եղբայրութեան ընդ մէջ օտար եւ եգիպտաքանակ Հայ գաղթականութեան :

ՆԵՂՈՍ լրագիրը պիտի հրատարակուի ամէն Զորեքշաբթի օրեր :

Պիտի պարունակէ ազգային կնանաց վրայ տեսութիւն եւ տեղեկութիւն . արտաքին եւ տեղական լուրեր . նոյնպէս զաւեշտական , բանասիրական եւ այլ օգտակար յօդուած եւ գրութիւն :

Խմբագրութիւնն իր լրագրոյն մէջ սիրով կը հիւրօնկալէ ամէն տեսակ գըրութիւն , որ լինի ընտիր օգտակար եւ իւր նպաստակին յարմար :

Լրագրոյն տարեկան բաժանորդագինն է ամէն տեղի համար 10 ֆուանք . վեցամսեանց 5 ֆուոնք . միշտ կանխիկ վճարելի :

Հասցէն է . «Խմբագրութիւն Նեղոս Լրագրի , Աղեքսանդրիա (Եգիպտոս) :